Համաձայնագիր-1
10.10.2018թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 29 » Նոյեմբեր 2018թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ե. Գևորգյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 10.10.2018թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.13-րդ կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների կազմակերպման կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 8.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Պայմանագրի գնի 100 տոկոսը՝ 46 647 000 (քառասունվեց միլիոն վեց հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, պայմանով, որ Կապալառուն Պատվիրատուին կներկայացնի կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21/26
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00440841
Հ/Հ 900013202016	Հ/Հ 11500344479000
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Տնօրեն
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____	Ե. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված
Հաստատված է
«10 » հոկտեմբերի 2018թ. կնքված
N ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010 գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում		
		Նոյեմբեր	Մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը	**Ընդամենը Տարի**
ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի վերանորոգման աշխատանքներ	5113	46 647 000	46 647 000	**46 647 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21/26
ՀՎՀՀ 00440841
Հ/Հ 11500344479000
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Տնօրեն

Ե. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/